

ՄԵԹՈԴԻԿԱ

Հասմիկ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ.Բոյունովի անվան ԵՊԼՀ

ՖՐԱՆՍԵՐԵՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԽՈՍՔՈՒՄ ՆԱԽԳԻՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ, ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԳՐԱՆՔ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ

Բուհերում օտար լեզվի ուսուցումը կառուցվում է առավելապես հաղորդակցման սկզբունքի հիման վրա, ուստի դասավանդման գլխավոր խնդիրը խոսքային հմտությունների և կարողությունների ձևավորումն ու զարգացումն է, որը ենթադրում է նաև սովորողների խոսքամտածողական գործունեության ընդլայնում: Ինչպես հայտնի է ֆրանսերենը հոլովներ չունի, և ֆրանսերենում հոլովական իմաստներն արտահայտվում են նախդիրների միջոցով: Այստեղ զգալի է բացասական փոխներթափանցման ազդեցությունը, ուստի սխալներն էլ բավականին շատ են: Նախդիրների հնարավոր կիրառությունների իմացության շրջանակը պետք է ընդլայնել, ինչն իր հերթին նշանակում է վարժությունների մշակված համակարգի ստեղծում, որն ավելի դյուրին կդարձնի անհրաժեշտ նյութի յուրացումը:

Բանալի բառեր. փոխներթափանցում, հաղորդակցման սկզբունք, խոսքային գործընթաց ձևավորել և զարգացնել խոսքային հմտություններ և կարողություններ

Բուհերում օտար լեզվի ուսուցումը կառուցվում է առավելապես հաղորդակցման սկզբունքի հիման վրա, ուստի դասավանդման գլխավոր խնդիրը խոսքային հմտությունների և կարողությունների ձևավորումն ու զարգացումն է, որը ենթադրում է նաև սովորողների խոսքամտածողական գործունեության ընդլայնում:

Ինչպես հայտնի է ֆրանսերենը հոլովներ չունի, և ֆրանսերենում հոլովական իմաստներն արտահայտվում են նախդիրների միջոցով: Բնականաբար, անհրաժեշտ է դրանք ճիշտ գործածել: Ասվում է, որ եթե որևէ մեկը ճիշտ է գործածում ֆրանսերենի նախդիրները, ապա նա տիրապետում է ֆրանսերենին: Այստեղ զգալի է բացասական փոխներթափանցման ազդեցությունը, ուստի սխալներն էլ բավականին շատ են: Այս ամենը բացատրվում է նրանով, որ ֆրանսերենի նախդիրները սովորողի հիշողության մեջ մեծամասամբ «ամրագրված» են միայն մեկ կամ երկու նշանակությամբ և կապվում են մայրենի լեզվի որևէ հոլովի կամ կապի գործածության հետ: Ակներև է, որ նախդիր սովորողի հիշողության մեջ պահպանված մեկ - երկու գործածությունները բավարար չեն անսխալ արտահայտվելու համար: Նախդիրների հնարավոր կիրառությունների իմացության շրջանակը պետք է ընդլայնել, ինչն իր հերթին նշանակում է վարժությունների մշակված համակարգի ստեղծում, որն ավելի դյուրին կդարձնի անհրաժեշտ նյութի յուրացումը:

Ֆրանսերենն ու հայերենը, միևնույն լեզվաընտանիքից լինելով, ունեն նմանություններ: Սակայն կանգ առնենք տարբերությունների վրա և քննարկենք դրանցից մեկը: Ըստ լեզուների ձևաբանական կամ տիպաբանական դասակարգման, որը հենվում է լեզուների կառուցվածքային ընդհանրությունների ու տարբերությունների վրա, արդի ֆրանսերենը դասվում է վերլուծական լեզուների

շարքին: Այն գերազանցապես վերլուծական լեզու է (langue analytique par excellence), կամ, ըստ որոշ լեզվաբանների, վերլուծականության միտում ունեցող լեզու (langue à tendances analytiques), ինչն ի հայտ է գալիս լեզվական բոլոր մակարդակներում, իսկ լեզվի զարգացման արդի փուլում ցայտուն կերպով դրսևորվում նաև բառապաշարում:

Ժամանակակից հայերենն ունի զարգացած հոլովական համակարգ: Հայերենում միայն ուղղական հոլովն է, որ ձևով հակադրվում է մյուս հոլովներին, քանի որ չունի հատուկ վերջավորություն և ելակետային ձև է թեք հոլովների համար:

Ժամանակակից ֆրանսերենը, ինչպես արդեն նշեցինք, չունի հոլովական համակարգ և հոլովական իմաստին հատուկ շարահյուսական կիրառությունները հաղորդվում են ոչ թե հոլովական վերջավորությունների, այլ նախդիրների միջոցով: Հենց նախդիրների օգնությամբ էլ արտահայտվում են միևնույն բառի քերականական տարբեր իմաստները.

Օր՝ համալսարանում՝ à l'université,
համալսարանի՝ de l'université,
համալսարանից՝ de l'université և այլն:

Եթե հոլովական վերջավորությունները ձևային են և ուսումնասիրվում են ձևաբանություն բաժնում, ապա նախդիրները՝ որպես անկախ բառեր, նախադասության մեջ կարող են հանդես գալ որպես ինքնուրույն անդամ: Հոլովական վերջավորություններն անկախ գործածություն չունեն, քանի որ որպես առանձին ձևային զուրկ են իմաստից, իսկ որոշ լեզուներում նախդիրները հոլովական վերջավորություններին հավասարազոր դերակատարում ունեն: Այդպիսին է նախդիրների գործառույթը ժամանակակից ֆրանսերենում:

Ֆրանսերեն սովորողը գիտի, որ **avec** նախդիրը համապատասխանում է հայերենի գործիական հոլովի վերջավորությանը: Իսկապես, միջոցի կամ գործիքի անուղղակի խնդիրը կամ ձևի պարագան արտահայտելիս այդ երևույթը ակներև է.

L'enfant dessine avec des crayons. - Երեխան նկարում է մատիտներով:
J'attends mon ami avec joie. - Ես սպասում եմ ընկերոջս ուրախությամբ:

Նմանությունների հիման վրա սովորողը հայերենի գործիական հոլովի տարբեր իմաստներն արտահայտելու համար անխտիր գործածում է **avec** նախդիրը և սխալվում, քանի որ գործիականի առումները բաշխվում են ֆրանսերենի տարբեր նախդիրների միջև: Օր.՝ *avec ton conseil /քո խորհրդով/ փոխ.՝ sur ton conseil: Ավելին, երբեմն գոյություն ունեցող համապատասխանություններն էլ կատարյալ չեն: Այսպես, վերը նշված միջոցի խնդրի դեպքում միշտ չէ, որ ֆրանսերենում կարելի է գործածել **avec** նախդիրը: Սովորողը պետք է իմանա, օրինակ, որ փոխադրամիջոցի դեպքում գործածվում են par կամ en նախդիրները /voyager en voiture - ճամփորդել մեքենայով, voyager par le train - ճամփորդել գնացքով/:

Փոխներթափանցումով պայմանավորված սխալների ենք հանդիպում de-ով կազմվող բառակապակցություններում: Սովորողը հիմնականում ճիշտ է յուրացնում vêtement de cuir /կաշվե հագուստ/, chaise de bois /փայտե աթոռ/, table de fer

/երկաթե սեղան/ տիպի բառակապակցությունները, հասկանալով, որ cuir, bois, fer գոյականներն առանց հողի գործածվելով կորցրել են գոյականի հատկանիշը և de նախդրի հետ համապատասխանում են հայերենի՝ *կաշվե, փայտե, երկաթե* հարաբերական ածականներին: Սակայն իմանալով, որ հայերենի՝ սեռական հոլով + գոյական կաղապարին ֆրանսերենում համապատասխանում է գոյական + du/ de la, des / + գոյական կաղապարը սովորողը գործածում է *manuel du français (ֆրանսերենի դասագիրք) ձևը փոխ. manuel de français: Միայն պատճառն այն է, որ հայերենի՝ սեռական հոլով + գոյական կաղապարով կազմված շատ բառակապակցությունների դիմաց ֆրանսերենում գոյություն ունեն ոչ թե գոյական + du/de la, des / + գոյական / օր. défense du pays/, այլ գոյական + de + գոյական կաղապարով կազմված միավորներ: Միայն կանխելու համար սովորողին անհրաժեշտ է հիշեցնել տվյալ կաղապարի de + գոյական մասի ածականական արժեքը, համաձայն որի, եթե այն կարելի է փոխարինել հայերենի հարաբերական ածականով, ապա պետք է գործածել հենց այդ ձևը, իսկ եթե ոչ՝ ուրեմն սեռական հոլովով արտահայտված է ստացականություն և պետք է գործածվի du/de la, des ձևը: Օրինակ՝ journée d'automne հայերեն կարելի է թարգմանել ոչ միայն որպես *աշնան* օր, այլև՝ *աշնանային* օր: Միայն կանխելու համար հարկ է հստակեցնել, որ եթե առկա է ստացականության իմաստ, պետք է գործածել գոյական + du/de la, des / + գոյական կաղապարը /défense du pays/, իսկ որոշային իմաստի դեպքում ճիշտ է գոյական + de +- գոյական / manuel de français / կառույցը:

Չպետք է մոռանալ նախդիրների գործածությանն առնչվող մի կարևոր առանձնահատկություն ևս: Վերլուծական բայերը գործածելիս սովորողը մտապահում է բառակապակցության հիմնական կառուցվածքային տարրերը և ուշադրություն չի դարձնում նախդիրներին: Ինչպես համադրական /ամբողջական/ բայերի դեպքում, այնպես էլ վերլուծական բայերի պարագայում դասավանդողը դրանք պետք է մատուցի իրենց նախդիրներով: Օրինակ՝ être ravi de, être déçu de, être furieux de, avoir peur de, avoir envie de, avoir raison de, avoir tort de, prendre part à, avoir accès à (auprès), faire alliance avec, avoir confiance dans, և այլն:

Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ երբ այս բայերը իրենց նախդիրներով են հայտնվում սովորողի բառատեսքում, վերջինս ակամա յուրացնում է բայն իր նախդրի հետ միասին: Սակայն չպետք է մոռանալ նաև, որ որոշ բայեր փոխում են իմաստը կախված նախդրի գործածությունից.

Je pense préparer le déjeuner = j'ai l'intention de préparer le déjeuner.

Je pense à préparer le déjeuner = Je me souviens que je dois préparer le déjeuner.

Չպետք է մոռանալ նաև, որ նախդիրների օգտագործումը անմիջականորեն առնչվում է խնդրառությանը: Այսպես՝ s'approcher բայը անուղղակի խնդրից առաջ պահանջում է de նախդրի գործածությունը, որը շատ հաճախ փոխարինվում է à նախդրով.

* Il s'approche à son ami.

փոխ. Il s'approche de son ami.

Միսլ գործածության պատճառն այն է, որ հանգման անուղղակի խնդիրը ֆրանսերենում ձևավորվում է à նախորդով, և սովորողը բնագոյաբար դիմում է համարանությանը՝ չհասկանալով, որ այդ դեպքում de նախորդի գործածությունը պայմանավորված է պատմականորեն ավանդված գործածությամբ:

Վերոհիշյալ սխալները կանխելու համար առաջարկում ենք դրանց հաղթահարմանն ուղղված վարժությունների մի շարք.

ա/ տրված տեքստում գտնել նախդիրները և ճշտել, թե հայերենի հոլովական ու կապական որ իմաստներին են դրանք համապատասխանում,

բ/ թարգմանել նախդիրների գործածությանն առնչվող և փոխներթափանցունը հաղթահարելուն ուղղված տեքստը՝ հայերենից ֆրանսերեն,

գ/ կազմել հարցեր տվյալ տեքստի շուրջ, որը լի է վերլուծական բայերով և համապատասխան խնդրառություններով,

դ/ միացնել նախադասության երկու հատվածները՝ հետևելով բայերի խնդրառությանը,

ե/ գտնել նախադասության ավարտը,

զ/ հայերենից ֆրանսերեն թարգմանել խնդրառական դժվարություններ պարունակող նախադասությունների շարք կամ կապակցված տեքստ/ վարժությունները սովորողին տրվում են՝ համապատասխան մակարդակի պահանջներից ելնելով /:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բարլեզիզյան Ա. Հայերեն - ֆրանսերեն բառարան, Երևան, 2009:
2. Բարլեզիզյան Ա. Լեզվական կապեր, Երևան, 1986:
3. Ֆրանսերեն - հայերեն բառարան, 4000 բառահոդված, գլխ. խմբագիր Ա. Միրադյան, Երևան, 2010:
4. Gilbert P. Dictionnaire des mots contemporains. P., Les Usuels du Robert; 1991.
5. Goose A. La néologie française aujourd'hui. P., C.I.L.F 1975.
6. Rey A. La lexicologie. P., 1980.
7. Robert P., Rey. A., Rey-Debove J. Le Nouveau Petit Robert. Dictionnaire alphabétique et analogique de la langue française. P., 2010.
8. Лопатникова Н. Н. Некоторые тенденции развития лексической системы современного французского языка. М., 2002.

А. ГРИГОРЯН – Ошибки в речи изучающих французский язык при использовании предлогов, трудности обучения и пути их преодоления. – Изучение иностранного языка в вузах строится преимущественно на основе развития и формирования речевых навыков присоблюдении основных принципов коммуникативного метода обучения. В процессе преподавания нами отмечены частые ошибки в речи студентов, а также отклонения, обусловленные интерференцией родного и обучаемого языков. Создание специально разработанной системы ситуативных упражнений имеет целью облегчить усвоение и закрепление навыков применения предлогов французского языка на примере отдельных синтаксических конструкций с семантически значимым управлением глаголов.

Ключевые слова: интерференция, принцип общения, развитие и формирование вербальных навыков и умений

H. GRIGORYAN – *The misuse of prepositions in the speech of French learners, the difficulties of teaching and the ways of overcoming them.* – In higher educational institutions the teaching of a foreign language is mostly built upon the principles of communication. Thus the main objectives of the teaching process is to shape and improve the communication skills and abilities, which also supposes amplification of the thinking process. As it is generally known, the French language does not have the category of case, instead the case meanings are expressed with the help of prepositions. Here the effect of negative permeation is evident, therefore, the mistakes are quite frequent. The scope of possible application of prepositions must be expanded. This will lead to the creation of an improved program of exercises, which will make the acquisition of the material easy and more pertinent for use

Key words: interference, communication principle, verbal skills and abilities, to form, to develop, speech act, to amplify, to prevent, to distribute, to clarify